

Նշանաւորք քան զամենայն դասս մարդկան ՚ի հարստութեան Սիւտուանեայցս, եւ հաղորդք քաղաքական եւ յաւէտ զինուորական պատուոյ, այլ եւ մասնակիցք եկեղեցականին, էին **Ձիաւորք**, ոչ սոսկ հեծեալք, այլ աւատական հրահանգօք կարգեալ Ասպետք, ըստ հին հայկական կամ պարսիկ կոչման, այլ յայսմ ժամանակի Ձիաւորք առձայնեալք. որպէս առ արեւմտեայսն՝ նոյնպէս եւ առ մերքս յոյժ կարեւորք եւ անհրաժեշտ համարեալք ՚ի պահպանութիւն եւ ՚ի պարծանս պետութեան. որպէս զի հարկ էր ամենայն պայազատաց թագաւորաց եւ պարոնայց՝ Ձիաւորս լինել, եւ ընդունել ՚ի պայմանեալ հասակի տիոց՝ մեծաւ հանդիսիւ՝ զաստիճանն զայն, յիւրաքանչիւր Վեհից, որոց՝ *լիճ ձիաւոր* կոչէին: Այսպէս եւ իշխանապետք մեր զառաջինն՝ յԱնտիոքայ Բրնձէն ընդունէին զասպետութիւն, կալով ժամանակ ինչ առ նմա՝ ըստ հրահանգաց օրինի: Իսկ յորժամ Լեւոն՝ զերի վարեալ զԲրինձն Պեմունդ՝ թօթափեաց զԼճութիւնն, եւ թագաւոր եւս եղեւ, այնուհետեւ ինքն եւ յաջորդք իւր տային զկարգն՝ որդւոց իւրեանց եւ այլոց լիճ ճորտից, ընդ որս յիշի եւ Անտիոքացւոցն եւ այլ փռանկ իշխանորդւոց ոմանց՝ ՚ի Հեթմոյ առնուլ զձիաւորութեանն կարգ, թէ եւ ոչ հպատակք նմին:Վասն պատշաճ տիոց ձիաւորութեան՝ Ասսիզն ասէ, «Ըդորդ հասակն (լիճին) տասնուհինկ տարին ե, եւ *ձիաւորութիւնն*. զի առանց ձիաւորութեանն՝ չկայ հասակ». այլուր նշանակի չորեքտասան ամ տիոց: Այլ ՚ի պատմութեան մերում յիշին ոմանց արքայորդւոց եւ ազնուազարմից ձիաւորութիւնք՝ վաղ կամ անագան քան զայդ հասակ. զոր օրինակ, Հեթում Ա ձիաւորեցոյց յամի 1259 զերկրորդ որդի իւր՝ զԹորոս, որ անցեալ թուի յայնժամ զհնգետասանամենիւք. իսկ անդրանիկ նորին եւ յաջորդ Լեւոն Բ՝ զերկոսին երեց որդիս իւր՝ զՀեթում (Բ) եւ զԹորոս՝ միանգամայն ձիաւորեցոյց յամի 1284, յաւուր մեծի տօնի Աստուածայայտնութեան, յորոց առաջինն ութետասանամեայ էր, երկրորդն հազիւ թէ չորեքտասանամեայ. ընդ որս «եւ այլ մանկունք իշխանաց եւ որք յարքունական սպասաւորացն». յորում հանդիսի ներկայ գոլով Յովհաննու Երզնկացոյ՝ խօսեցաւ երկար ճառ, ՚ի բանն «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է», եւ այլն:Յետ թագաւորական օծման եւ պատերազմական յաղթանակաց՝ մեծագոյն քաղաքական հանդէս՝ ձիաւորութեանն էր. եւ որպէս եցոյց ճառախօսն՝ սովորաբար ընդ արքունի պայազատաց՝ սպասէին եւ այլք յագատաց՝ ձիաւորել զորդիս իւրեանց: Մարթ է փոքր ՚ի շատէ զարտաքին հանդէսն գուշակել, այլ մեզ ցանկալի էր